ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2021թ. N ------ - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Որոշման N 2 հավելվածում՝

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Գնումների վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Գնումների վարչություն	
1	վարչության պետ	1
2	վարչության պետի տեղակալ	1
3	գործավար	1
-	**Ապրանքների գնումների բաժին**	
4	բաժնի պետ	1
5	գլխավոր մասնագետ	4
6	առաջատար մասնագետ	3

-	**Աշխատանքների և ծառայությունների գնումների բաժին**	
7	բաժնի պետ	1
8	գլխավոր մասնագետ	4
9	առաջատար մասնագետ	2
	ԸՆԴԱՄԵՆԸ	18

բ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Եկամուտների հաշվառման և գանձման վարչություն» գլխի 3-րդ և 7-րդ տողերի 3-րդ սյունակի «1» թիվը փոխարինել «2» թվով ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «14» թիվը փոխարինել «16» թվով:

գ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ֆինանսական վարչություն» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1 կետով.

1.1	վարչության պետի տեղակալ	2

6-րդ, 12-րդ և 18-րդ տողերի 3-րդ սյունակի «3», «4», «4» թվերը համապատասխանաբար փոխարինել «2», «5», «3» թվերով, ուժը կորցրած ճանաչել 15-րդ տողը և գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «Բյուջետայի ծախսերի արդյունավետության գնահատման բաժին» տողով և 21, 22 ու 23 կետերով.

-	**Բյուջետայի ծախսերի արդյունավետության գնահատման բաժին**	
21	բաժնի պետ	1
22	գլխավոր մասնագետ	2
22	առաջատար մասնագետ	2

ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «31» թիվը փոխարինել համապատասխանաբար «36» թվով:

2. Սույն որոշմամբ նախատեսվող հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափերը սահմանվում են Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշմամբ նախատեսված ամսական պաշտոնային դրույքաչափերին համապատասխան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Գնման գործընթացների համար նախատեսված ֆինանսական միջոցները կազմում են Երևանի համայնքի բյուջեի ծախսերի զգալի մասը և գնման գործառույթները միտված են Երևան համայնքի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերմանը:

Երևան համայնքի կարիքների բավարարումը միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչությունը (այսուհետ՝ Գնումների վարչություն):

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N526-Ն որոշման (34-րդ կետը խմբ. 10.10.2019թ. N1422-Ն՝ ուժի մեջ է մտել 02.11.2019թ.) համաձայն՝ գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախառակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակվում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով:

Վերոգրյալ պայմանները և գործառույթները ապահովվելու նպատակով, Երևանի ենթակայության շուրջ 470 կազմակերպությունների կարիքների համար գնման գործընթացներին առնչվող փաստաթղթերը տրամադրվում են Վարչությանը՝ ուսումնասիրելու և հրապարակելու համար: Գնումների վարչությունն օրական ստանում և հրապարակում է միջինում թվով 35-40 կազմակերպությունների՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված, գնման գործընթացների շրջանակում հրապարակման ենթակա փաստաթղթեր, որոնք հարկավոր է ուսումնասիրել և տալ գնահատական՝ օրենսդրության համապատասխանության վերաբերյալ:

Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումներով Գնումների վարչությունն իրականացնում է նաև Երևանի ենթակայության 161 մանկապարտեզների սննդամթերքի և շուրջ 60 կազմակերպությունների վառելիքի գնման գործընթացները:

Գնումների վարչություն մուտքագրված գնման հայտերի քանակը 2016-2018թթ. ֆինանսական տարվա կտրվածքով միջինում կազմել է 740 հայտ, մինչդեռ 2019 թվականի և 2020 թվականի երրորդ եռամսյակի դրությամբ այդ ցուցանիշը ավելացել է 55.4 %-ով՝ կազմելով 1150 գնման հայտ, որով էլ պայմանավորված ըստ տարիների Երևան համայնքի բյուջեում ավելացել են համայնքի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերման ծավալները: Մասնավորապես՝ 2016-2018 թվականներին Երևան համայնքի բյուջեում գնման հայտով ներկայացված գնումների նախահաշվային արժեքները կազմել են 19.0 մլրդ. ՀՀ դրամ, իսկ 2019 թվականի և 2020 թվականի երրորդ եռամսյակի դրությամբ նախատեսվել է միջինում 29.6 մլրդ. ՀՀ դրամ կամ ավելացել է 55.8%-ով:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և Վարչության աշխատակիցների աշխատանքային ծանրաբեռնվածությունը, վերոհիշյալ գործառույթները որակով և արդյունավետ իրականացնելու նպատակով առաջարկվում է Գնումների վարչության հաստիքներն ավելացնել 5 միավորով:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ վարչության «Գնումների կազմակերպման» և «Գնումների համակարգման» բաժինները հիմնականում իրականացնում են նույն գործառույթները, ուստի Գնումների վարչության գործառույթների բարելավման և գնման ընթացակարգերի կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվում է «Գնումների

կազմակերպման» բաժինն անվանափոխել «Աշխատանքների և ծառայությունների գնումների բաժին», իսկ «Գնումների համակարգման» բաժինը՝ «Ապրանքների գնումների բաժին» անուններով:

ՀՀ հարկային օրենսգրքում 2021 թվականին տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով անցում է կատարվել հիմնովին նոր ծրագրի, ինչն ավելի է ծանրաբեռնել վարչության աշխատանքը: Ներկայումս վարչությունն աշխատում է միաժամանակ հին և նոր ծրագրերով՝ առնչվելով բազմատեսակ խնդիրների հետ, որոնց լուծման համար պահանջվում է տարաբնույթ քննարկումների կազմակերպում, առաջարկությունների համակարգում և ընդունում: Վարչության գերծանրաբեռնվածությունը խոչընդոտ է հանդիսանում վերագրված պարտականությունների ամբողջական և ժամանակին կատարման համար: Միաժամանակ նշեմ, որ վարչությունն անցում է կատարում նաև գույքի և հողի վարձակալության գծով եկամուտների հաշվառման ավտոմատացված նոր համակարգին, ինչը նախատեսում է տվյալ ոլորտի մանրակրկիտ ուսումնասիրություն և համակարգի ստեղծմանն ուղղված առաջարկությունների համակարգում:

Անձնակազմի թվաքանակի անբավարարության պատճառով եկամուտների վարչությունը չի կարողանում ամբողջովին պատշաճ կերպով իրականացնել իր վրա դրված պարտականությունները, մասնավորապես՝ կատարել եկամուտների հավաքագրման խորը վերլուծություններ և դրանից բխող կանխատեսումներ:

Ելնելով վերոգրյալից՝ օրենքով և կանոնադրությամբ աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչությանը վերագրված պարտականությունների ամբողջական և ժամանակին կատարման համար անհրաժեշտ է համալրել վարչության հաստիքացուցակը երկու գլխավոր մասնագետի հաստիքներով՝ յուրաքանչյուր բաժնում ավելացնելով մեկական հաստիք: Ավելացվող հաստիքների համար նախատեսվում է մեթոդաբանության և եկամուտների հավաքագրման ռազմավարության մշակմանն ուղղված աշխատանքների իրականացում, եկամուտների հավաքագրման խորը վերլուծություններ, ինչն իր հերթին պահանջում է բարձրագույն մասնագիտական կրթություն և աշխատանքային փորձ:

Հաստիքների ավելացման արդյունքում վարչությունը հնարավորություն կունենա եկամուտների հավաքագրման խորը վերլուծությունների միջոցով ստանալ ճշգրիտ գնահատականներ, ինչը կբերի բյուջեի եկամտային մասի իրատեսական պլանավորմանը: Աշխատակազմի համալրումը կնպաստի նաև օրենքների և տարաբնույթ կարգերի փոփոխությունների մանրազնին ուսումնասիրությանը, տարընթերցումների պարզաբանմանն ուղղված միջոցառումների ժամանակին կազմակերպմանը և օրենսդրական նախաձեռնությունների մշակմանը:

Հաշվի առնելով աշխատակազմի ֆինանսական վարչությանը վերապահված գործառույթների և նպատակների բազմազանությունը, կառուցվածքային 6 բաժնի համակարգման ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև որպես սկզբունք սահմանելով դրանց արդյունավետ կառավարումը՝ սույնով առաջարկվում է վարչության բաժինների համակարգումը բաժանել երկու մասի:

Մասնավորապես, վարչության պետի տեղակալի առաջարկվող 2 հաստիքային միավորները համակարգելու են.

- Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող թվով 472 կազմակերպությունների նախահաշվային հարաբերությունները, դրանց փոփոխության մասին եզրակացության և դրանց վերաբերյալ համապատասխան նախագծի կազմման աշխատանքները,
- կազմակերպությունների կողմից ներկայացվող եռամսյա հաշտվետվությունների՝ եկամուտների և ծախսերի, դրամական միջոցների հոսքերի վերլուծությունները և մոնիտորինգի անցկացումը,
- հաստիքային միավորների փոփոխության և դրա արդյունքում ֆինանսական փոփոխությունների վերաբերյալ աշխատանքները,
- Երևանի ենթակայության տակ գտնվող ՓԲԸ-ների յուրաքանչյուր հաշվետու տարվա համար Երևանի բյուջե վճարվող շահութաբաժինների վճարման չափի և զուտ շահույթի բաշխման ուղղությունների աշխատանքները,
- Երևանի քաղաքապետարանի կողմից համակարգվող դպրոցների ուսումնական պլանների և տիպային հաստիքացուցակների հետ տարիֆիկացիաների ու հաստիքացուցակների համեմատության և ամփոփման աշխատանքները,

- Երևանի բյուջեի կատարումը սպասարկող՝ գանձապետական գործառնությունների, այդ թվում՝ Երևանի բյուջեի մուտքերի և ելքերի տեղեկատվության, ինչպես նաև քաղաքացիների կողմից վճարված գումարի վերադարձի հետ կապված աշխատանքները,

- Երևան համայնքի բյուջետային գործընթացի վարման, Երևան համայնքի բյուջեի նախագծի կազմման՝ ծախսերի և եկամուտների պլանավորման, այդ թվում՝ բյուջետային մուտքերի և ելքերի եռամսյա բաշխման, դրանց փոփոխության վերաբերյալ Երևանի քաղաքապետի կամ ավագանու որոշման նախագծերի կազմման, ինչպես նաև Երևան համայնքի բյուջեի՝ եռամյսա և տարեկան, կատարման հաշվետվության կազմման, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկի հաշվապահական հաշվառման վարման աշխատանքները:

Համակարգվելու են նաև տարբեր մակարդակի բյուջեների միջև միասնականության և հարաբերությունների վարումը, մասնավորապես՝ պետության կողմից հատկացվող սուբվենցիաների, դոտացիաների, պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների կատարման բյուջեի մասով պայմանագրերի կազմման, դրամական միջոցների փաստացի ստացման և ըստ նպատակի ծախսման, նշված հատկացումների վերաբերյալ կառավարության կողմից ներկայացվող փոփոխության նախագծերի մասով մասնագիտական եզրակացության տրամադրումը և հետագայում արդեն դրա հետ կապված գործառնությունների կազմակերպումը:

Հաշվի առնելով, որ ցանկացած համայնքում խիստ կարևոր հանգամանք է հանդիսանում հանրային միջոցներից հավաքագրված յուրաքանչյուր լումա եկամտի առավելագույնս արդյունավետ ծախսումը, նախատեսվում է Երևան համայնքի բյուջետային համակարգում կատարել ինստիտուցիոնալ փոփոխություններ: Սույնով առաջարկվում է աշխատակազմի ֆինանսական վարչության կառուցվածքում նախատեսել բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման բաժին, որի նպատակներն ու գործառույթներն են հանդիսանալու ներկայից բյուջետային համակարգից ծրագրային բյուջետավորման անցման կազմակերպումը, դրա մեթոդաբանության ներդրումը համայնքային մակարդակում և արդեն ընդհանուր համակարգի պատրաստումը, որի արդյունքում ծրագրերը կներկայացվեն չափելի նպատակների տեսքով՝ կկապակցվեն ոլորտային ռազմավարությունների նպատակների հետ, ընդհանուր կներդրվի գումարի ծախսման թիրախային համակարգ՝ ծրագրի նպատակին առավել արդյունավետ միջոցով հասնելու նպատակով: Կներդրվեն ծրագրի կատարման և առհասարակ նախատեսման սպասվող արդյունքային գործիքները: Ծրագրային բյուջետավորման անցման գործողություններից զատ, բաժնի գործառույթներից է հանդիսանալու նաև Երևան համայնքի ենթակայության տակ գտնվող թվով 472 օբյեկտների նախահաշվից դուրս դրամական միջոցների հատկացման և սպասվող ծախսի վերաբերյալ մասնագիտական եզրակացության տրամադրումը, դրա կարիքի գնահատումը, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված արդյունավետության սկզբունքից ելնելով՝ գնման միավորի արդյունավետության գնահատումը թե՛ Երևանի բյուջեի հաշվին տրամադրվող սուբսիդիաների մասով և թե՛ ընդհանուր համայնքային բյուջեի կատարվող ծախսերի մասով: Նախատեսվում է նաև, ելնելով նույն արդյունավետության սկզբունքից և արդեն դրա փաստացի արդյունքային որակական ցուցանիշներից, առավել արդյունավետ կազմակերպել Երևանի բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության հետ կապված պայմանագրային պարտավորությունները, որը նույնպես կբերի բյուջետային միջոցների արդյունավետ կառավարման, ինչպես նաև բարձր արդյունքային ցուցանիշների:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման Նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ